պատմութեան կարևորագոյն աղբիւրներից։

Երկրորդ կարևոր հանգամանքը մեր մանրանկարի շէնքի՝ նորա երկյարկանի լինելն է. եկեղեցական երկյարկանի շէնքերի մասին մեր մէջ խօսք կայ Ժ. դարից (*). մանրանկարչական հնագոյն մնացորդները տեսանք Շխնոցի և ապա մեր աւետարանի մէջ, իսկ ճարտարապետական «զոչաները» Հռոմոսի վանքի դիմաց, Ս. Նիից եկող ճանապարհի վերայ, բայց նաև բուն վանքում, ապա Տեղերի վանքում,



(Պատկեր 15)

որ չինուած է կամ սկսուած ՈԿԲ = 1213 թուին եւ արդէն վերջացած ՈՀ = 1221 թուին Աղբայրիկ ճարտարապետի ձեռքով, Վաչէ Վաչուտեանի և նորա ամուսին Մամախաթունի կողմից, Եղիպատրուշ գիւղում, այժմ Տամշլու կոչուած, Աբարանի շրջանում, դարձեալ Վաչուտեանների ժամանակից. եկեղեցու գաւթի երկու կողմից կան այդպիսի երկյարկանի, գմբեթաւորած շէնքեր, բայց ոչ անչատ սիւների վերայ, այլ թմբուկով։ Նոյնը պիտի լինէր և Արջուառճի վանքում Հ. Սարգիսեանի նկարագրութիւնից դատելով։ Գաւիթներից անկախ նման շէնքեր, բացի Հաղբատի Համազասպաշէն զանգակատնից և Սանահնի նման շէնքից ԺԳ. դարում, բազմաթիւ են և սիրուած ԺԴ. դարի առաջին կիսում, ինչպէս Եղվարդի Ս. Յակոբն է, Կարբիի զանգակատունը, Ամազուի Բուրթելաշէնը և այլն, որոնց ծագումը մենք բացատրել ենք զանգակների գործադրութեան ընդունելութեան, արձանագրական կամ յիշատակարանների տուեալներին հետևելով (*)։

Բայց վերջերս արուեստի պատմութեան յայտնի մասնագէտ Գրաբարը նրանց ծագման մասին մի նոր տեսութիւն է տալիս, կապելով արևելեան քրիստոնէութեան հնագոյն դարերի դամբարանների կամ վրկայարանների (μαρτύριον) հետ, Ասորիքում, Փոքր Ասիայում և Հիւսիսային Աֆրիկայում, որոնց զարգացումը յետոյ Հայաստանում և Բոլղարիայում (**), կ'աւելացնենք մեր կողմից նաև Սելջուկեան արուեստի մէջ(***)։ Մի ուրիշ գիտնական, Ն. Բրունով, ազդուած Գրաբարի աշխատութեամբ, այդ զարգացման միջին օղակն է համարում Հռիփսիմէի տիպի Մցխէթի Ս. Խաչը՝ Վրաստանում։ Այս ցուցումներից տեսնում ենք, թէ մեր մանրանկարի շէնքը ճարտարապետական ի՛նչպիսի կարևոր հարցի հետ է կապուած, հայ շրջանակից էլ դուրս, ընդհանուր արուեստի պատմութեան համար։ Այս տիպի շէնքերը փոփոխակներով իրենց ազդեցութիւնը պահում են մինչև ԺԷ. դարը, որի փառաւոր վերջին ձևակերպութիւնը Էջմիածնի զանգակատունն է։ Մեր հաւաքած առատ նիւթերը այս տիպի շէնքերի լուսաբանութեան համար, յոյս ունենք կը յաջողուի կարճ ժամանակից յետոյ՝ յատուկ ուսումնասիրութեամբ մատուցանել գիտութեան։

Նկարչի տեխնիկան բարձր է և իւրատեսակ. գոյները նուրբ են և բարակ քսուած, կարծես լսուած՝ մագաղաթի վերայ.

(*) Թովմա Արծրունի, Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1916. 405, 409, 412։

(*) Բանբեր, Հայաստ. Գիտական Ինստիտուտի. 1921-1922. 188-190։

(**) Bi AB. I-1. 1922. Bolgarskia Zerkwi-Grobnizi.

(***) Bi AB. 1927. 135. K Woprosu o Bolgarskich dwychetajnich zerkwach-Grabnizach.